ԳԱՐԱՁԻՆԱՐ

ԵՒ

ԻԿԻՐՄԻՏԷՕՐԹ

Խմբագրոց-Ընկեր Աբարաք ամսագրոյ.

Յայս ամի յաղագս անձնական պիտոյից իմոց պատահեալ ի գեղջն Ղարաչինարու Ղարապաղու գաւառի, տեսի անդ յեկեղեցիս Նոցա ի տօնի Ծննդեան Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի անսովոր և անշաղկապ արարողութիւնս ժամերգութեան. վասն այն ցաւալի տեսութեան բարկացեալ մեր . . . պատմեցին ժողովրդականք, թէ յաւէժ և սովորաբար այդպէս է, և ոչ պատահմամբ. ստուգելով աւաղ կարդացի , զի ոչ վայելէր երից միաբան Նորընծայ Քահանայից այնպիսի շարունակութիւնս ժամերգութեան։

Յետ այնորիկ շրջելով ի շրջակայ գիւղօրայս Իկիրմիտօրտու, առհասարակ տրտունջս լսէի ի տեղական գործակալաց և յականաւոր իշխանաց, իբր թէ՝ նոքա են պատճառն տգիտութեան իւրեանց և մանկանց վիճակի Նորին. պատմեն թէ՝ գործակալք մեր կարի աչալուրջ և արագահաս են առ ի ժողովման դրամոց ուխտատեղեաց մերոց, և առաւել յօգուտ որբոց և այրեաց և յօգուտ հոգևոր ուսումնարանի Շուշւոյ քաղաքի, ի ծանրաբեռնեալ և ի տաժանեալ խղճալի յորբոց և յաղքատ ռամիկ ժողովրդականաց մերոց ըստ ռամկաց որք ասեն՝ թէ «փուղն տանում են դմակն քսում», ասացէք խնդրեմք՝ մի՞թէ այրիք մեր և ի. պարտական են Նոցա այսինքն Շուշւոյ քաղաքի յղփացեալ ժողովրդականաց, որք իբրև զկերակուրս հացի ուտեն զմեզ։

Հաւաստի զի՝ ի 1855 թուականէն մինչ ցայս 1871 թիւ Իկիրմիտօրտ (24) գիւղօրէից ժողովեալ յօգուտ ուսումնարանի և ի դրամքը երբէք չպիտոյացան մանկանց մերոց. մեք զրկեալ զոլով միանգամայն ի ճառագայթից արեգական, առ դրան նստեալ կեամք զցայգ և զցերեկ, չէք որ զբռնս մեր պատմեսցէ յականջս Բարձրաստիճան Հոգևոր Կառավարութեան։

Հասարակութիւնք Հայոց յիշեալ Իկիրմիտօրտու թուով են 1000 տուն, ի հնումն համարեալ առանձին տէրութիւն, եկեալ իսկ ի կողմանէ Տփխիսայ և այժմ բնակին ի կալուածս Հայազն մելիքաց. մերձ ի Գանձակ մինչ ցկէս աւուր ճանապարհ, իսկ ի քաղաքէն Շուշւոյ երից աւուրց հեռաւորութեամբ, վասն այն դժուարանան տանել անդ զմանկունս իւրեանց, և հոգալ զկարևոր պիտոյս նոցա վասն ուսումնառութեան և այլ արհեստից։

Ուստի յայտնելով Նորին Վ.Հ. Հայրապետին մերոյ Տեառն և Տեառն Գէորգայ Դ. Կաթողիկոսի ամենայն Հայոց, որ միահամուռ աղաչեսցուք և խնդրեսցուք, զի բարեհաճեսցէ հրամայել բանալոյ ի գեղջն Ղարաչինարու ըստ տեղւոյն ուսումնարան մի, որոյ մերձ են շրջակայ գիւղօրայքն Իկիրմիտօրտու և հին բնակչաց որք են աւելի քան զերեք հարիւր տունս, այնու մխիթարել զազգս և պայծառացուցանել զԵկեղեցիս Նորին։

Խ. Մ. Տ. Յարութիւնեանց

1871 -դ

Ի Գանձակ։

Յ. Գ. Իկիրմիտօրտու վիճակի քահանայքն 22 ից աւելի են և Աբարաք ամսագրոյ յաղագաւ ամեն մէկն տուել է 4 ռուբլի, բայց թէ Արարատ ամսագիրն ի՞նչ տեսակ բան է, և ի՞նչ ձև ունի, նոյն ողորմելիք դեռևս չեն տեսած։

(Որոց անկէ՝ Նոցա ուշադրութիւնը կը հրաւիրեմք սոյն այս գրութեան վերայ. և կը յուսամք որ երկու կողմանց դժգոհութեանց և վնասուց աւելի ևս տեղիք չը տալոյ համար պէտք եղածները փութով կը տնօրինեն . . . ։)

ՀՈԳ. ԴՊՐՈՑ

ԱՇՏԱՐԱԿԱՑ

Խմբագրոց-Ընկեր Աբարաք Ամսագրոյ.

Իմ համաբնակիչ Աշտարակեցի եղբարց մի քանի գործեր՝ այսօր շարժառիթ են լինում իմ զրբչիս վերևալ հետևեալ տողերը գրելու